

## ՀԻՎԱՆԱԴԱՆՈՑՆԵՐԻ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՈՒՄ ՍՏԱՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈԳԵՅՈՒԶԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ

Վարդանյան Զ.Կ.<sup>1</sup>, Ղազարյան Գ.Ա.<sup>2</sup>, Դանիելյան Ա.Ա.<sup>1</sup>,  
Հայրապետյան Ա.Ա.<sup>3</sup>, Նարիմանյան Մ.Չ.<sup>1</sup>

<sup>1</sup> Երևանի Մ. Չերացու անվ. պետական բժշկական համալսարանի ընտանեկան բժշկության  
ամբիոն, Երևան, Հայաստան

<sup>2</sup> Երևանի Մ. Չերացու անվ. պետական բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության  
ամբիոն, Երևան, Հայաստան

<sup>3</sup> Երևանի Մ. Չերացու անվ. պետական բժշկական համալսարանի հանրային առողջության ամբիոն,  
Երևան, Հայաստան

Դեռևս հնագույն ժամանակներից հոգեհուզական լարվածության թուլացման նպատակով մարդիկ կիրառել են բնական միջոցներ: Բույսերի հետ շփումն օգնում է ապաքինմանը, մարդկանց ընկալելու իրենց տեղն աշխարհում, նվազեցնելու լարվածությունը:

Ներկայացված հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել հիվանդանոցների կանաչապատման ազդեցությունը՝ երկարատև բուժում ստացող երեխաների հոգեհուզական վիճակի վրա:

Երևանի «Մուրացան» հիվանդանոցում մեր կողմից ստեղծվել է «Կանաչ սենյակ» ընտրած հատուկ սենյակային բույսերով: Մանկական Էնդոկրինոլոգիայի բաժանմունքում, դեղորայքային և արտ-թերապիա ստացող երեխաների մի մասի մոտ (փորձնական խումբ - պատահականորեն ընտրված 6-ից 13 տարեկան երեխաներ, թվով 21) արտ-թերապիան իրականացվել է «Կանաչ սենյակում»: Ցանկության դեպքում, մասնագետների աջակցությամբ, երեխաներն իրականացրել են նաև բույսերի խնամք: Երեխաների հոգեհուզական վիճակը գնահատվել է թերապիայից առաջ և բուժման 10-րդ օրը: Փորձնական խմբի երեխաների հետազոտության տվյալները համեմատվել են «Ստուգիչ» խմբի հետազոտության տվյալների հետ. «Ստուգիչ» խմբի երեխաները (թվով 21) նույն բուժումն են ստացել Էնդոկրինոլոգիական բաժանմունքում, սակայն չեն հաճախել «Կանաչ սենյակ»: Երեխաների հոգեհուզական վիճակը ուսումնասիրելու և ստուգելու համար օգտագործվել է Չինկևիչ-Եվստիգնևայի «Չգացմունքների հրաշալի աշխարհ» թեստային մեթոդը, որի միջոցով երեխաների գունային գերադասությունների նկարագիրը՝ երեխաների նկարներում հիմնական գույների արտամիման որոշման միջոցով: Արդյունքների թվային գնահատումները մշակվել են Մանն-Ուիլքոքի մեթոդով (Ս-չափորոշիչ):

Երկու խմբի երեխաների հետազոտության արդյունքները հավաստիորեն տարբերվում են. **փորձնական խմբում** դիտվում է գույների կիրառության բազմազանության կրկնակի աճ: Մարդու ստվերանկարի գունավորումը փորձնական խմբում նույնպես հավաստիորեն լավացել է, որը նշան է երեխաների սեփական մարմնի ընկալման բարելավմանը:

Կանաչապատման միջոցով հիվանդանոցներում լիահարմարության ստեղծումը նպաստում է նյարդային լարվածության նվազեցմանը, մեղմացնում երեխաների հոգեվիճակը հիվանդանոցի տրավմատիկ ազդեցությունից, և, հետևաբար, կարող է բարելավել բուժման ելքը: